

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

—
ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

«Փարիզի հայկազեան ուսումնասիրաց ընկերութեան» լուծուելուց յետոյ՝ մայրաքաղաքիս մէջ ծնունդ է առնում, եթէ չեմ սխալուում 1889 թուականին, հայոց մի նոր ընկերութիւն «Փարիզի հայ ուսանողական միութիւն» անունով:

Այս «Միութեան» նպատակն էր «համերաշխութեան մի կապ հաստատել տեղոյս հայ ուսանողների միջև և օգնել Փարիզում գտնուած արկածեալ հայերին ընդհանրապէս, որոնք ի պահանջել հարկին կը դիմէին «Միութեանը» և նմանապէս ճութացնել իրանց ընկերութեան գրադարանը ամեն տեսակ հայկական ընտիր գրքերով և այլն»:

Թէ ինչ ժառանգական կամ խնամէութեան որ և է կապ է եղել այս նորածին «Միութեան» և հանգուցեալ ուսումնասիրացի» միջև և կամ թրպիսի երկունքից յետոյ և ինչ ընկերասէր հանգամանքներում սկսել էր ապրել այս «Միութիւնը» ևս և շարունակել իւր սակաւօրեայ գոյութիւնը հայոց ասուպների հորիզոնի վրայ՝ ես այստեղ ոչինչ չը կարողացայ իմանալ: Սորա մասին էլ նոյնը պէտք է ասեմ, ինչ որ անցեալ անգամ գրեցի «Հայկազեանի» նկատմամբ՝ այն է թէ ցանկալի է որ «Միութեան» նախաձեռնողներից և կամ գործիչ անդամներից թէկուզ մէկը մի քանի կարևոր տեղեկութիւններ տայ մայրաքաղաքիս մեր գաղութի կեանքով հետաքրքրուող հայերիս և պատմէ, թէ ինչպիսի հոգեբանական երևոյթներ են տեղի ունենում այստեղ մերոնց մէջ, որ «Փարիզի հայ ընկերական միութիւններն» առհասարակ ասես թքով կպցրած լինելով՝ կազմուում և լուծուում են կարծես թիթեռների պէս ապրելով...

Այս «Միութեան» ատենադպիրներից մէկը, ինչպէս յիշում եմ, պ. Յ. Մէլիք-Բախտամեան՝ «Սոսոսայի—Մէլիքն» էր: Պարոնը, որ այն ժամանակ թղթակցում էր այստեղից «Արձագանքին» մտաւոր կերակուրի նիւթ տալով հայ ընթերցողներին

և որ այժմ զբաղուած է այդտեղ գուցէ աւելի մննդարար կերակուրներ մատակարարելով Թիֆլիսի հասարակութեան, չի՞ ցանկանալ արդեօք իւր սովոր ուղղամտութեամբ իրանց «Փարիզի վաղանցուկ «Միութեան» և ապա սորա «բաժանման» պատմութիւնն անել մեզ, իրաւ որ շատ հետաքրքիր կը լինէր լսել այդ բոլորը մանաւանդ «Միութեան» «ատենադպրից»:

— Երկարատեւութեամբ, այն, երկարատեւութեամբ միայն, համեմատաբար կարծեմ աւելի բազումը է երևում ներկայումս այստեղ գոյութիւն ունեցող «Փարիզի հայոց բարեգործական ընկերութիւնը»—La société de bienfaisance des arméniens de Paris կոչումով, որ տասը տարի կայ զգործում է այստեղ և ճանաչուած է ֆրանսիական պետութիւնից. մի առաւելութիւն, որ մեծ մայրաքաղաքիս ոչ մի հայ ընկերութիւն չէ ունեցած երբէք, եւ չը նայելով այս արտաքին առաւելութեանը՝ ի խայտառակութիւն հիւրասէր Լիւտէսիոյ մեր բազմաթիւ և «բազմազրազ» գաղութի, պէտք է ասեմ որ «Փարիզի հայոց բարեգործութիւնը», որի նպատակն է օգնել այստեղ պտնուող արկածեալ կամ խեղճ հայերին և մանաւանդ իրանց հայրենիք վերադարձող հայ մարդկանցը, հազիւ 40 կամ 50 անդամ կարողացել է ժողովել տասնեակ տարիների ընթացքում 1500 ֆրանկ չնչին գումարի տարեկան մի ելեւտով:

Բայց թէ ի՞նչ են հասկանում Փարիզաբնակ մեր ազգայինք «արկածեալ կամ խեղճ հայ» ասելով՝ ես չեմ կարողանում լաւ ըմբռնել: Մի՞թէ 1902-ին այստեղ վախճանած թշուառ Ներսէս Պոյաճեանը, որի դին տարել, թաղել են Բանիօ (Bagneux) հանգստարանի աղբատաց մասի գերեզմանոցի մեջ և այն էլ ժամանակաւորապէս՝ «արկածեալ և խեղճ հայերից» չէ՞ր արդեօք, որին ոչինչ ուշադրութիւն չէ դարձրել ձրի հիւանդանոցում եղած ժամանակ անգամ տեղոյս հայ բարեգործութիւնը: Մի՞թէ քամբախտ Սիմէօն Հախումեանը, որ այսօր մայրաքաղաքիս արուարձան Վիլտուիվ կոչուած աւանի յիմարանոցումն է խնամուում ձրիաբար Փրանսիայի հանրապետութեան հաշուով՝ «արկածեալ և խեղճ» հայերից չէ՞ արդեօք, որին օգնութեան որևէ ձեռք չէ կարկառում Փարիզի հայոց բարեգործութիւնը:— Է՛հ, մախլաս:

Անշուշտ տարեկան 1500 ֆրանկ ելեւտի աննշան գումարով ամենքն էլ կասեն, որ շատ բան չէ կարող անել այս ընկերութիւնը: Բայց խնդիրը այստեղ մեծ ու փոքր գործեր կամ պահանջներ անելու կամ կատարելու մէջ չէ, այլ այն մտերմական՝ թէկուզ հէնց մի փոքրիկ, զգայուն ուշադրութեան մէջ,

որ տեղոյս հայ ռեարեգործները, որպէս հեռաւոր օտար երկրում հիմնեալ մի հայ հաստատութեան անդամներ, իւրով-սանն կարող են դարձնել դէպի ամեն մի իրանց թշուառացած հայ եղբայրը:

Սակայն ինչքեր եմ ասում: Ի՞նչ մտերմութիւն և ի՞նչ ազնիւ այլ զգացումներ կարելի է փնտոել Փարիզաբնակ այժմեան հայերի մէջ, բանի որ, առաջին նամակիս ակնարկածիս համաձայն, սոքա ասես սրցում են իրարու հետ, որ անմիաբանութիւն, ատելութիւն, հակակրանք և այն, արհամարհանք վայրենի յատկութիւնները տիրեն իրանց արդի քաղաքակրթութեան լայն ու ազատ կենդրոնում... Եւ կարծեմ չեմ սխալուիլ եթէ ասեմ, որ տեղոյս հայ գաղութը եթէ չամաչէր Ֆրանսիական պետութիւնից, որ՝ ինչպէս ասում եմ, պաշտօնապէս ճանաչած է Փարիզի հայոց Բարեգործական ընկերութիւնը՝ գուցէ մինչև հիմայ լքման ու լուծման վիճակի հասցնէր սորան ևս ըստ իւր հին սովորութեան: Արդ՝ ինչ բան է արդեօք ռեարեգործութեան» 40 կամ 50 անդամ ունենալն ու 1500 Ֆրանկ տարեկան ելևտի ազքատիկ գումարը մայրաքաղաքիս մէջ՝ ընակուող հազարաւոր հայերի համար, ի՞նչ արդեօք, եթէ ոչ ամօթը երեսից բոլորովին չը կորցնելու մի շատ թոյլ միջոց...

Բայց ինչ և է. այսպէս խօսելով ես մտադիր չեմ հարկաւ ուժ և իցէ վիրաւորելու, այլ յոյս պիտի ունենանք, որ արդար քննադատութիւնը մասամբ գոնէ առիթ կը տայ մերայնոց իրանց բնակած երկրի ճշմարիտ առաջադիմութեանը հետեւելով՝ ընկերական ամեն ընտիր ու ազնիւ գործունէութեանը զարգացնել և առաջ տանել Փարիզի իրանց միակ հայ ընկերութիւնը: Սորա մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ ցանկացողը կարող է դիմել Rue Gondorcet թիւ 13 տունը, որտեղից կարելի կլինի ձեռք բերել թէ տեղոյս հայ «Բարեգործութեան» կանոնագիրը և թէ այլ տեղեկագիրներ սոյն ընկերութեան, որի վարիչները իրանք էլ անշուշտ իրանց կողմից պիտի աշխատեն ամեն բանով նպաստել գործին՝ հաղորդելով բոլոր հայ խմբագիրներին ևս կարևոր և ճիշտ տեղեկութիւններ: Այս ձևով միայն կարելի կը լինի համակրանք և գուցէ մինչև իսկ աջակցութիւն գրաւել ընդհանուր հայ հասարակութեան կողմից դէպի մայրաքաղաքիս յիշեալ հայ հաստատութիւնը:

Ո՛րչափ ցաւում եմ, որ անկարող եմ գնալ, այցելել անյոյս հիւանդ դժբախտ Հախումեանին, որի մասին վերջերս խիստ բօթաբեր լուրեր էր տալիս ինձ իմ ծանօթ բժիշկներից

մէկը:—Մի շարժուն և միանգամայն ընկճեալ կմախք-մարմին է նա, ասում էր բժիշկը, բանաւոր էակի բոլոր կենդանի յատկութիւններից կարծես արդէն զրկուած, բացի փայլուն աչքերից, ուր ժամ առ ժամ ասես կայծակի պէս ցայտում են տակաւին նորա դառն կեանքի անվերջ բողբոջ հոգու ցլոթը իսպառ մոլորուած հայեացքում: Աշկարայ է որ խեղճ Սիմէօն Հախումեանի մարմինն ու հոգին միշտ անբաժան ապրում են միմեանց հետ:—Երբ տկարացել է հոգին՝ հիւանդացել է մարմինը: Իսկ այժմ, երբ բոլորովին հիւանդ է հոգին՝ կարծես արդէն մեռել է մարմինը... Խորհուրդ չեմ տալ, շարունակում էր բժիշկը, արագ ու դիւրազգաց տպաւորութիւն ընդունող ցաւակից անձանց տեսնել նորան այնպիսի սաստիկ կակծալի դրութեան մէջ...

Ոչ պակաս ցաւալի էր ինձ նոյնպէս գնալ, գտնել անցեալները Փարիզի վերոյիշեալ Բանիօ հանգստարանում երկու տարի առաջ հողին յանձնուած մեր վաղեմի ընկեր Ներսէս Պոյաճեանի կորած և գետնին հաւասար գերեզմանը: Մի բարակ անձրևոտ և ախուր պարագային ասես ներդաշնակ օր էր, որ Փարիզաբնակ իմ բազմամեայ բարեկամ պարոն Կ. Շ. և ես դիմեցինք դէպի այն ընդարձակ գերեզմանատունը՝ տանելով մեզ հետ յախճապակէ անթառամ երի մի պսակ և երկկանգուն փայտէ մի խաչ հանգուցեալի անուան արձանագրով: Ո՞վ էր արդեօք այդ Պոյաճեանը, կը հարցնէ անշուշտ ընթերցողը:— Գրեթէ տարօրինակ և միանգամայն մի խեղճ անձն էր սա, որ 1872 ի վեր զանազան ժամանակ զանազան ուսմանց յարելով Փարիզում, այլ և այլ ընկերութեանց անդամ, պարբերական հրատարակութեանց պատահական թղթակից*), արևելեան լեզուների թարգման, դասատու լինելով հանդերձ՝ զլիաւորապէս բժշկական գիտութեանը հետևեց սովորական ապրուստի կարիքի մէջ գտնուելով միշտ Երեսուն տարի շարունակ հրապուրիչ Լուտէսիոյ մէջ այսպէս անորոշ դեգերելուց յետոյ՝ 1902 ին հագիւ կարողանում է բժշկի տիտղոս և պաշտօն միաժամանակ ձեռք բերել, երբ անողորմ ճակատագիրը ձրի հիւանդանոցում վերջին վճիռն է կարգում սորա գլխին և իբրև չունևոր թաղում է աղքատաց գերեզմանատեղում և այն էլ՝ ժամանակաւորապէս, այսինքն հինգ տարով, մինչև որ անպատճառ վրձարուի գերեզմանավարձը, այլապէս կանյայտանայ, կը կորչի յաւիտեան թշուառ Ներսէսի հողակոյտը... Շատ հետաքրքիր են նոյնպէս սորա երկար տարիների ընթացքում ինձ գրած մասնաւոր նամակները, որ շատ ընդհանուր հարցեր էլ են շոշափում, սակայն այս անգամ բաւական համարենք այսքանս:

* Մի երկու թղթակցութիւն էլ «Արձագանքին» ուղարկեց ութսունական թուականներին: